ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 6 » փետրվարի 2017թ N 6 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրություններին Գրիբոյեդով համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել.

1) Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքում Նար-Դոսի 1/1 հասցեում գտնվող միջնակարգ դպրոցը: Տեղամասային կենտրոնի տարածքի տիրապետող նշանակել միջնակարգ դպրոցի տնօրեն Սերգեյ Սարգսի Թադևոսյանին:

2.Սույն որոշման մեկ օրինակ ուղարկել լիազոր մարմնին, թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տարածքի տիրապետող Գրիբոյեդով համայնքի միջնակարգ դպրոցի տնօրեն Սերգեյ Թադևոսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 թվականի փետրվարի 6
Գրիբոյեդով համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 10 » փետրվարի 2017թ N 7 - Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների անցկացման նպատակով՝քարոզչական պաստառները փակցնելու համար Գրիբոյեդով համայնքի տարածքում առանձնացնել անվճար տեղ՝Գրիբոյեդով համայնքի Չարենցի 8 հասցեում գտնվող մշակույթի տան պատին՝ 50 ք.մ մակերես:

2.Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել կենտրոնական ընտրական հանձնաժողով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 թվականի փետրվարի 10
Գրիբոյեդով համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

« 1 » փետրվարի 2017թ N 6 - Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝համայնքում սգո արարողությունների համար ծաղկեպսակների ձեռք բերման նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին / Ս. Գրիգորյան / `սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3. Հանձնաժողովին / Ս. Գրիգորյան /`սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել համայնքի ավագանու անդամ `Աննա Գրիգորյանին / համաձայնությամբ/:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 թվականի փետրվարի 1
Գրիբոյեդով համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ղեկավարի
2017 թվականի փետրվարի 1-ի
N 6-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝
Ս. Գրիգորյան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Անդամներ՝

Ա. Ենոքյան — աշխատակազմի առաջատար մասնագետ

Դ. Դավթյան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Քեշիշ-Ղուկասյան